Известия АН Армянской ССР. Науки о Земле, 5, 87—88, 1968

ՀՈԲԵԼՅԱՆԱԿԱՆ ՏԱՐԵԹՎԵՐ

ԷԴՎԱՐԴ ՄԱԿԱՐԻ ՄՈՒՐԶԱԵՎ

(Ծննդյան 60-ամյակին)

Լրացավ հայազգի գիտնական աշխարհագետ, պրոֆեսոր, ՍՍՀՄ Գիտությունների Աշխարհագրության ինստիտուտի ավագ գիտական աշխատակից, ՍՍՀՄ Պետական մրցանակի լաուրեատ Էդվարդ Մակարի Մուրզաևի ծննդյան 60-ամյակը։

Էդվարդ Մակարի Մուրզաևը ծնվել է Սիմֆերոպոլում 1908 թ. հունիսի 1-ին։ Ավարտել է Լենինգրադի համալսարանի աշխարհագրական ֆակուլտետը 1930 թ.։ Աշխատում է ՍՍՀՄ Գիտությունների ակադեմիայում 1931 թվականից։ Դոկտորական դիսերտացիան պաշտպանել է 1948 թ. Մոնղոլիայի ուսումնասիրությունների արդյունքների հիման վրա։

Գիտական գործունեությունն սկսել է դեռևս ուսանողական տարիներին, մասնակցելով Արագածի ղանգվածի ուսումնասիրություններին (1929 թ.) ՍՍՀՄ ԳԱ Անդրկովկասյան արշավախմբի կազմում։ Այնուհետև է. Մ. Մուրզաևը 37 տարի շարունակ աշխատում է Միջին և Կենտրոնական Ասիայի ուսումնասիրությունների ասպարեզում։ Նրա դաշտային ուսումնասիրությունները (19 տարվա ընթացքում) ընդգրկում են հսկայական տարածություններ՝ Կասպից ծովից մինչև Տոնկինի ծովածոցը, 1931 թ.—Արևմտյան Թուրքմենիա, Կարաբուղազ, Ուստյուրտ, 1932—1933 թթ.— Կենտրոնական Տյան-Շան, 1934—1935 և 1937 թթ.—Թուրքմենական Կարա-Կումներ, 1940—1944 թթ.—Մոնղոլական Ժողովրդական Հանրապետությունը, 1950 թ.— Իսսիկ-Կուլ, 1951 թ.— Պամիր, 1952 թ.—Ֆերգանա, Ամու-Դարյա, 1956—1959 թթ.—Սինցզյան (ՉԺՀ), 1963—1964 թթ.—Վիետնամի Դեմոկրատական Հանրապետություն. ահա է. Մ. Մուրզաևի դաշտային հետազոտությունների ոչ լրիվ ցանկը։

Միջին և Կենտրոնական Ասիայի դասական հետազոտողներից և ճանապարհորդներից (Պրժեվալսկի, Կոզլով, Օբրուչև և ուրիշներ) հետո է. Մ. Մուրզաևի աշխատանքները հանդիսանում են երկրորդ խոշոր փուլն այդ երկրների ուսումնասիրության ասպարեզում։ Պատահական չէ, այդ պատճառով, որ Միութենական Աշխարհագրական Ընկերությունը 1947 թ. պարգևատրեց նրան Պրժեվալսկու ոսկե մեդալով, իսկ ՍՍՀՄ Գիտությունների ակադեմիայի Նախագահությունը 1963 թ. նրան շնորհեց Օբրուչևի անվան մրցանակը։ է. Մ. Մուրզաևի «Монгольская Народная Республика» (2-е изд., 1952) *և* «Природа Синьцзяна и формирование пустынь Центральной Азии» (1966) *աշխատությունները դարձել են դասական մենագրություններ։*

է. Մ. Մուրզաևի գիտական հետաքրքրությունների շրջանակները չափազանց լայն են ու բազմակողմանի։ Նրա ուսումնասիրությունների մեծ մասը կրում է կոմպլեքսային բնույթ։ Բացի իր ուսումնասիրությունների հիմնական առարկայից՝ ֆիզիկական աշխարհագրության և հնեաշխարհագրության պրոբլեմներից, նա մեծ ուշադրություն է նվիրում ուսումնասիրվող երկրների բնական ռեսուրսներին ու նրանց օգտագործմանը, ինչպես նաև տերիտորիաների ուսումնասիրությունների պատմությանը։ Նրա գիտական հետաքրքրություն-

ների մեջ իր որոշակի տեղն ունի նաև տոպոնիմիկան, որի վերաբերյալ նա տպագրել է ոչ քիչ թվով հետաքրքիր աշխատություններ, և գիտության այդ ճյուղի ասպարեզում ճանաչված մասնագետներից մեկն է։

Դաշտային հարուստ և բազմազան նյութը և գրականության տվյալների մանրազնին վերլուծությունը հնարավորություն են ընձեռնել է. Մ. Մուրզաևին գրելու բազմաթիվ գիտական և գիտա-հանրամատչելի աշխատություններ, որոնց թիվը 500-ի է հասնում (հոդվածներ, գրքեր, բրոշյուրներ, ակնարկներ, գրախոսականներ և այլն), այդ թվում՝ 19 առձնաին գրքեր, որոնցից 9 թարգմանված են արտասահմանում, իսկ 3-ը ՍՍՀՄ ժողովուրդների լեզուներով։

Մեծ աշխատանք է ներդրել է. Մ. Մուրզաևը ռուսական աշխարհագրության դասական հեղինակների՝ Ն. Վ. Պրժեվալսկու, Լ. Ս. Բերգի և այլոց աշխատությունների խմբագրման, մեկնաբանման և հրատարակության գործում. միայն Ն. Մ. Պրժեվալսկու աշխատությունների բառահատոր հրատարակության մեջ Մուրզաևի գրչին է պատկանում 16 մամուլ խմբագրական տեքստ։ Նա հանդիսանում է «Зерубежная Азия» (1955), որտեղ, ի դեպ, հատուկ և բավականին հաջողված գլուխ է նվիրված Հայկական լեռնաշխարհի ֆիզիկա-աշխարհագրական բնութագրմանը և «Средняя Азия» (1958) կոլեկտիվ մենագրությունների ստեղծման նախաձեռնողը, հեղինակակիցն ու խմբագիրը, ինչպես նաև մի շարք տոպոնիմիական ժողովածուների խմբագիրը։

է. Մ. Մուրզաևի գիտական գործունեությունը բարձր գնահատականի է արժանացել նաև արտասահմանում. 1961 թ. նա ընտրվել է Գերմանական բնական գիտությունների «Լեոպոլդինա» ակադեմիայի իսկական անդամ և Մոնղոլական ժողովրդական Հանրապետության Գիտությունների ակադեմիայի պատվավոր պրոֆեսոր։

Մեծ կազմակերպչական ընդունակությունների շնորհիվ է. Մ. Մուրզաևը 8 տարի շարունակ աշխատել է որպես ՍՍՀՄ Գիտությունների ակադեմիայի Աշխարհագրության ինստիտուտի դիրեկտորի տեղակալ, 3 տարի՝ ՍՍՀՄ Աշխարհագրական ընկերության Մոսկվայի ֆիլիալի գիտական քարտուղար, երկար տարիների ընթացքում եղել է Աշխարհագրական ընկերության և նրա Մոսկվայի ֆիլիալի խորհրդի անդամ։

Որպես անձնավորություն է. Մ. Մուրզաևը բարեացակամ է, օբյեկտիվ, ունի գիտնականի բարձր պատասխանատվության գիտակցություն, մեծ ուշադրություն և օժանդակություն է ցուցաբերում երիտասարդների նկատմամբ, համեստ է և հմայիչ. մարդկային այս լավագույն հատկությունների շնորհիվ նա սիրված է ու հարգված աշխարհագետների լայն հասարակայնության կողմից։

Իր 60-ամյակը է. Մ. Մուրզաևը դիմավորում է ուժերի ծաղկման շրջանում և ստեղծագործական մեծ մտահղացումներով։

Գ. Ս. Աբրահամյան

ՀՍՍՀ ԳԱ Երկրաբանական գիտությունների ինստիտուտի Աշխարհագրության բաժին